

րէ, որք իրենց հետ կը բռնեն կը տանին աղի կտորները և ջրանցքին յատակը նստած կոյտերը: «Մի և նոյն երեւոյթները պիտի պատահին Գապէսի ջրանցքին մէջ, և թէ բաւական լայն և երկայն լինի զոր գիւրաւ կարելի է ձեռք բերել»:

Պ. Բուաբրի պատասխանները կը հաստատէ ըստ ամենայնի Պ. Տը-Լէ-սէփս և կ'ըսէ, որ շէր կարող հաճոյա-

նալ այն գիտնոց որք իրեն ընդդիմաբանեցին և ոչ նախատեսել իւր խորհրդի յաջողութեան մասին գժուտութիւններ: «Մի այնպիսի ձիւնարկ որ միշտ պիտի մնայ, կը կատարեւոր գործուի ժամանակով եւ յարատեւ աշխատութեամբ, եւ շատ անգամ անոր դէմ ելած արգելքները՝ յաջողութեանը կը նպաստեն»:



Մ Ա Հ Ա Գ Ո Յ Ժ

ԵԿԻՊՏԱԲԱՆԿ Ռաֆայէլեան Գէորգ Պէյը ներկայ ամսոյս մէջ իւր մահկանացուն կնքեց ՚ի հասակի վաթսուէն և հինգ ամաց: Սա՛ իւր արհեստին մէջ ունեցած աննման տաղանդովը սիրելի եղած էր Եգիպտոսի Խտիվներուն եւ շատ Փաշաներու. իւր բարեպաշտութեամբ, առատաձեռնութեամբ եւ առաքինութեամբ սիրելի եղած էր համայն աղբայնոց: Սա՛ աղբատութեան մէջ ծնաւ, եւ իւր բնածին հանձարովը բարձրացաւ եւ հարստութեան տէր եղաւ. եւ որովհետեւ գիտէր աղբատութեան վիշտը, թշուառութեան սրտակսկիծ դառնութիւնը. ուստի իւր հարստութիւնը՝ աղբատները սիրիւելու, թրջ ու առութիւնը մխիթարելու եւ պանախդութիւնը պատասպարելու համար ՚ի գործ դրաւ. եւ հուսկ ամենայնի աղբատ մեռաւ, եւ իւր վերջին սպասը, յուղարկաւորութիւնը իւր Խբթի սպասաւորը կատարեց, որ Հանգուցելոյն շնորհիւ այսօր մեծագումար հարստութեան տէր եղած է: Մեռաւ անղաւակ, բայց ոչ յիշատակ. իրեն բարե-

դաշտական գործերը անմահ են եւ անմահ պիտի պահպանեն իւր անունն ու յիշատակը :

Մահարձանները ժամանակի ծախիչ ժանեաց կեր կ'ըլնան եւ կեղծանին , բայց մէն մի առարկնութիւն յաւէժական կոթողներ են , որ կը դիմակալեն ժամանակի եղծիչ զօրութեան եւ իրրեւ յաղթականներ դարուց 'ի դարս կը պանծան . ասոր համար է , որ Սողոմոն կ'ըսէ . “ Լաւ է անդուակութիւն հանդերձ քաջութեամբ ” . իցիւ թէ ամեն մահկանացուի վերաբերէր այս խօսքը . իցիւ թէ ամեն մարդոյ կեանքը մի այսպիսի քաջութեամբ պտտուէր : Զը մոռնամք յիշել , որ Գէորգ Պէյի վերջին տարիներուս մէջ 'ի յիշատակ իւր հանգուցեալ Տիկնոջ շինած եւ Ս. Աթուոյս նուիրած զոյգ մի աշտանակները , որ Ս. Գորութեան Տաճարին մէջ իւր հանձարին փայլ եւ բովանդակ Հոյսոյ աղգին փառք են , Հանգուցելոյն բարեպաշտութեան անբարբառ , բայց մշտնջենական վկայներ են : Ար մաղթեմք նորա հոգւոյն հանգիստ յԱստուածային երանութեան :

